

# ՄՇԱԿ

Տարածվում է զինվորական և քաղաքական 6 տարեկան  
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մեջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».  
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(Բացի կիրակի և առն օրերէն):

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Հայտարարութիւնները համար վճարում են  
խրաբանչիւր բաւին 2 կոպեկ:

ՆԵՐԿԱՅ 1889 ԹԻՒՆ

## „ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԲԱՍՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է՝  
Բացված է կէս տարվայ բաժանորդագրու-  
թիւնը:

«Մշակի» տարեկան գինն է—10 ռ., կէս տար-  
վանը—6 ռուբլի:

Գրվել «Մշակին» կարելի է ԽՄԲԱԳՐԱՍԱՆԸ  
(Բարոնսկայա և Բաղդարյան փողոցների անկի-  
նում, տուն Թամաշիլի):

Օտարաբաղադրանքները պէտք է դիմեն հետեւեալ  
հասցեով. Тифлисъ, Редакция «МШАКЪ», իսկ  
արտասահմանից. Tiflis, Rédaction du journal  
arménien «MSCHAK»:

### ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

Տարրական, միջնակարգ և բարձրագոյն իգա-  
կան ուսում.—ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ  
կարգից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՒԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.  
Նամակ Աւստրիայից. Նամակ Թիւրքիայից.—  
ԽԱՆԻ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՆԱԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՈՒՆ.—ՅԱՅ-  
ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Թուրքիի  
նկատողութիւններ:

ՏԱՐԱԿԱՆ, ՄԻՋՆԱԿԱՐԳ ԵՒ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ  
ԻԳԱԿԱՆ ՈՒՍՈՒՄ

### I

Մի ժամանակ,—և այն էլ ոչ շատ հին  
ժամանակ,—աղջիկներին ուսում տալու  
խնդիրը մի անհասկանալի և անմատչելի  
խնդիր էր մեր ժողովրդի համար: Արեւե-  
լեան աշխարհի մութ հասկացողութիւն-  
ներով խմորված հայը, ինչպէս և իր հա-  
րեան մահմեդականը, հասկանալ անգամ  
չէին ուզում թէ կարելի է աղջիկներին  
համար դպրոց բանալ, թէ կարելի է աղ-  
ջիկներին, այդ խելքը կարճ, բայց ծամը  
երկար՝ արարածներին դպրոց ուղարկել:  
Եւ այդ հասկանալի է, քանի որ կինը ա-  
րեւելի կրօնական վարդապետութիւնների  
հիման վրա և աւանդական նախապաշար-

մունքների զօրութեամբ համարվում էր և  
մինչև այժմ էլ մեր երկրի յետընկած ան-  
կիւններում համարվում է մի այնպիսի ա-  
նընդունակ, ինքնուրոյն լինելու շնորհից  
զուրկ, և մինչև անգամ այնպիսի ստոր ա-  
րարած, որի մասին մի հասարակութեան  
մէջ խօսելիս և որի անունը տալիս, արե-  
ւելցին միշտ աւելցնում է՝ «ամօթ չը լի-  
նի ասել», կարծէք թէ կնոջ մասին խօսե-  
լը մի այնպիսի ամօթալի բան է, որ ա-  
ռանց ամաչելու և առանց ներողութիւն  
խնդրելու՝ նրա անունը տալ չէ կարելի...:

Սակայն այդ ժամանակները փոքր առ-  
փոքր անցնում են: Մեր կեանքի մէջ ներս  
մտնող քաղաքակրթական հոսանքը,—ու-  
րախոյնութեամբ պէտք է խոստովանել,—փո-  
քրը առ փոքր ջանքախումբ է այդ այ-  
լանդակ, վայրերի հասկացողութիւնները,  
հասկացողութիւններ, որոնք արեւելքի նը-  
ման դարերից ի վեր մտաւոր անշարժու-  
թեան ենթարկված, և ամենախաւար զա-  
ղափարների երկրպագու մի երկրի մէջ մի-  
այն ծնվել և ապրել կարող էին:

Այժմ մեր ժողովուրդը հաշտվել է աղ-  
ջիկներին ուսում տալու մտքի հետ, և  
այդ ոչ թէ միայն մեծ քաղաքներում և  
գաւառական քաղաքներում, այլ նոյն իսկ  
շատ գիւղերում, ուր փոքր ի շատ շար-  
ժում է մտել մարդկանց ուղեղի և աւան-  
դական հասկացողութիւնների մէջ: Եւ այդ  
միտքն այնքան արդէն տարածվել է մեր  
հասարակութեան մէջ, որ համարձակ կա-  
րելի է ասել թէ նրա պահանջներին ան-  
կարող են բաւականութիւն տալու այն  
փոքր թվով օրիորդական դպրոցները, ու-  
րոնք գոյութիւն ունեն կովկասի զանազան  
կողմերում: Նման ժողովուրդը, ինչպէս ինչ-  
եւոր, իր սեփական նախաձեռնութեամբ օ-  
րիորդական դպրոցներ բանալ անկարող է  
այն պատճառով, որ մեր գիւղական հա-  
սարակութիւնների դրամական միջոցները  
ընդհանրապէս այդ թոյլ չեն տալիս:  
Եւ տարաբաղադրաբար, այժմ էլ մեր տա-  
րական օրիորդական, ինչպէս և տղայոց  
դպրոցների թիւը փոխանակ աւելանալու,  
ընդհակառակն զգալի կերպով պակասում  
է...

Տարրական-սկզբնական դպրոցների հետ  
միասին մեծ աղողութիւն են գտել մեր  
երկրում և օրիորդական միջնակարգ դպ-  
րոցները, ուր ոչ թէ աշակերտութիւնների

պակասութիւն չը կայ, այլ մինչև իսկ  
դպրոցները միջոց և տեղ չունեն մեծ  
քաղաքներում ընդունելու այն բոլոր-  
րին, որոնք ցանկութիւն են յայտնում միջ-  
նակարգ դպրոց մտնել և միջնակարգ ու-  
սում ստանալ: Այդ երեւոյթը քանի զնայ,  
աւելի պէտք է սաստկանայ, քանի որ առ-  
հասարակ մեր փոքրիկ քաղաքները գուրկ  
են նոյն իսկ չորս դասարանեան օրի-  
որդական դպրոցներից, և այդ պատճառով  
վերջին տարիների ընթացքում գաւառնե-  
րից բաւական թվով աղջիկներ սկսել են  
դալ կենտրոնական քաղաքները՝ միջնակարգ  
դպրոցներ մտնելու, և կամ որ և է մաս-  
նադիտական ուսում, ինչպէս օրինակ, ման-  
կաբարձութիւն, սովորելու նպատակով:

Գրագէտ և որ և է ուսումնասիրում ա-  
ւարտած աղջիկները ներկայումս մեր հա-  
սարակութեան մէջ դեռ շատ աննշան պը-  
րօցէնա են կազմում: Դա անհերքելի մի  
փաստ է: Սակայն, ի նկատի ունենալով մի  
կողմից օրիորդական դպրոցների բշտութիւնը  
և միւս կողմից այն հանգամանքը, որ աղ-  
ջիկներին ուսում տալու ձգտումը շատ նոր  
է մեր ժողովրդի մէջ, չէ կարելի չը խոս-  
տովանել, որ այնու ամենայնիւ սկզբնաւո-  
րութիւնը անաշու չէ: Տարուց տարի ոչ  
թէ զգալի կերպով աւելանում է միջնա-  
կարգ դպրոցներ մտնող աղջիկների թիւը,  
այլ նոյն իսկ աւելանում է այն տեսակ  
աղջիկների թիւը, որոնք թողնելով իրանց  
հայրենի գիւղը, դիմադրելով ծնողների  
արգելքներին, և յաղթելով ամեն տեսակ  
նիւթական և բարոյական արգելքների  
զալիս են մեծ քաղաքները՝ Թիֆլիս, Բա-  
գու, որպէս թէ այդտեղի իրական դպրոց-  
ներում՝ արջնապարզ ուսում ստանալու քա-  
ուրախութեամբ պէտք է համարել մեր  
կանանց զարգացման գործում, ինչպէս ու-  
րախալի փաստ պէտք է համարել և այն,  
որ միջնակարգ դպրոցներում արդէն սկսել  
են երեւալ և մահմեդական դաս-  
ն ու թէ ան պատկանող աղջիկներ, որոնց  
դպրոց մտնել և աւարտելը թուրք ժողո-  
վրդի այժմեան հասկացողութիւնների ժա-  
մանակ ուղղակի հերոսութիւն և մահմե-  
տական կանանց պատմութեան համար մի  
նոր և մխթարիչ շրջան պէտք է համա-  
րել, ուր և մի ի թարիչ շրջան ենը  
ասում, որովհետեւ միայն ուսումը, և ուս-  
ման հետ առցած զաղափարները կարող

են ջանջախել այն աւանդական մութ և  
սպանիչ հասկացողութիւնները, որոնք իր-  
եւ մի անթափանցելի վարագոյր ծածկել  
են արեւելցի կնոջ կեանքը, թոյլ չը տալով  
որ նա լոյսի զէթ մի ճառագայթ տեսնէ,  
և զգայ թէ ինչպիսի մթնոլորտով է շրջա-  
պատված ինքը:

Սակայն դրանով չէ վերջանում մեր կա-  
նանց ուսման խնդիրը: Մեր մէջ կինը ար-  
դէն սկսել է դիմել և բարձրագոյն  
ուսման—բայց այդ մասին մի ուրիշ ան-  
գամ:

Խ. Մ.

## ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

Մայիսի 25-ին

Մօս 15 տարի Շիրակից բացակայ լինելուց  
յետոյ, առիթ ունենալով անցեալները չընելու  
Շիրակի գիւղերում, աւելորդ չիմ համարում իմ  
ապաւորութիւնները հաղորդել: Ցուցնով պիտի  
ասել, որ 15 տարի անցնելուց յետոյ անգամ  
Շիրակի գիւղերը ես գտալ նոյն դրութեան մէջ.  
նոյն գետնափոր օրերը ու խախտվ խրճիթները,  
նոյն դարձահոտութեամբ լի փողոցները, նոյն  
աղքատ ժողովուրդը, նոյն արմատացած խորին  
աղիտութիւնը, նոյն նախապաշարմունքները՝ փո-  
փոխութիւն չատ քիչ և համարեա ոչինչ: Միւս  
թարահան ոչինչ չը կայ: Այս գիւղացիները ոչ  
միայն ծոյլ չեն, այլ չափից դուրս աշխատասեր  
ժողովուրդ են, բայց իրանց աշխատութիւնը  
չէ շատ արդիւնաւոր: Ինչպէս ինչպէս ինչպէս  
նախ և Աղքատութիւն պատճառներից մի քա-  
նիսը հետեւաները կարելի է համարել:

Բացի երկրագործութիւնից ուրիշ ոչ մի տե-  
սակ պարագայումը ձեռք բերելու հանկուծիւն  
չունեն: Երկրագործութիւնն էլ կատարում են  
նոյն ձեւերով, ինչ ձեւով որ հասել է իրանց ձեռքը  
աւանդաբար իրանց պապերից: Նոյն նահապետա-  
կան գութանն ու արօրը, նոյն գերանդին ու փոխը:  
Եւրօպական երկրագործական գործիքների մա-  
սին ոչինչ դադարեալ չունեն, իսկ երբ որ նրանց  
պատում էք դրանց առաւելութեան և յարմա-  
րութեան մասին և յորդորում էք ձեռք բերել  
այդ գործիքներից և փորձել, իսկոյն պատասխա-

ւորներէ հետ յարակցելուց, որ չը փչացնեն նրա  
ճաշակը: Իսկ այդ փոքրիկ փայլուն գիմնա-  
դիւտների ապագան, կեանքը, ուսանողութիւնը  
լաւ յայտնի են. ով որ ուսանող է եղել, նա լաւ  
ճանաչում է իր այդ կարգին պատկանող ընկե-  
րներին, որոնք մի քանի տարի թափառելով մայ-  
րաքաղաքներում ու մի քանի տասնեակ լիկօ-  
տութիւններէ վրա չապելով իրանց բուրքիները և  
ժամանակը, կերակրւում են տուն իրանց հօր  
զանազան միջոցներով գիւղածր վայելելու և անդի-  
լու...

Դրանց ալքը հօ վաղուց քօռ է հասարակ դասի  
համար:

Բայց միթէ օրինակներով կը վերջանայ. ահա  
մէկը, ահա միւսը, ահա տասներորդը,—դրանք  
ամենքն էլ մեր յիշատակած տիւրը իրողութեան  
փառաւոր ապացոյցներն են...

Մարդասիրութիւնը բարոյականութեան հիմքե-  
րից մէկն է, յանուն մարդասիրութեան քաղաքա-  
կրթված մարդը սեփական բարօրութիւնից յետ է  
կանխում, եթէ այդ անելու հարկ է լինում  
Բայց միթէ քաղաքակրթված չեն մեր շուտում  
առանձնները, միթէ ուսումը, որի ամենաբարձր  
նպատակն է բարոյական պրինցիպներ տարրա-  
նելը, նրանց վրա չէ ազդել:

Մեր ինտելիգենտները իսկապէս մի կաթիլ են  
ծովի առաջ՝ համեմատելով հայ հասարակութեան  
մասսայի հետ, որից նրանք դուրս են եկել:

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԹՈՒՆԻՑԻՆ ԵՒ ՆԱՄԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Այժմ հաստատված բան է սօցիալական գիտու-  
թեան մէջ, որ մարդուս գործողութիւնների և  
հասարակութեան դրութեան մէջ կայ մի կապ, որը  
պայմանաւորվում է, այսպէս ասված, հասարա-  
կութեան օրէնքի գոյութեամբ. ամեն հասարա-  
կութեան մէջ գոյութիւն ունի երկուքների այն-  
պիսի կանոնաւորութիւն, այնպիսի օրէնք, որի  
զօրութեամբ առանձին անհատները իրենց  
գործողութիւնները կարող են ընդունվել իրեն  
հետեւանք այդ հասարակութեան յայտնի արմա-  
դրութեան, կամ դրութեան. այդպիսով ոչ միայն  
մի քանի անհատները համաձայն գործողութիւն-  
ները, այլ և ամեն մի անհատի տեսակ տեսակ  
գործողութիւնները կարող են բացատրվել, նայե-  
լով հասարակութեան այս կամ այն դրութեան:

Մեր հասարակութեան մէջ, ինչպէս և ամեն  
ուրիշ հասարակութիւնների մէջ, կան շատ տա-  
րօրեան և անկանոն երևոյթներ, որոնց խիստ  
կերպով որոշելը, և բացատրելը՝ քննելով մի և  
նոյն ժամանակ և հասարակութեան այդ պատե-  
րի սկզբնապատճառը—թողնում ենը ուրիշ ժա-  
մանակի և գուցէ աւելի ձեռնհասներին. այս ան-

գամ մեզ հետաքրքրում է մի երևոյթ, որը վերա-  
բերում է հասարակութեան և ինտելիգենցիայի  
յարաբերութիւններին:

Ո՞ւր չէ յայտնի այն այնպիսի յարաբերութիւ-  
նը, որի մէջ գտնվում է մեր շուտում առած,  
զասը գէպի հասարակ ժողովուրդը. ձվ չը գիտէ,  
որ շատ կան այնպիսի բարձրագոյն ուսում ստա-  
ցած մարդիկ, որոնք զգուշացնում են վերաբերվում  
դէպի այն դասը, որից իրանց դուրս գալով,  
մարդ են դառնել: Մեծ քաղաքներում յաճախ  
կարելի է պատահել «գիրք» ունեցող մարդկանց,  
զիցուր մի բռնկի: Գիտէ՞ք դա ձվ է: Մինչև տա-  
ւը տարեկան հասակը նա իրանց գիւղում հօր-  
թիւ էր էր արածանցում, պատահմամբ նա ընկաւ  
քաղաք, և կլանվելով իր խելք ընտանիքի արիւն  
բորտիքով աշխատած կողմիկները, մտաւ միջնա-  
կարգ ուսումնարան և աւարտեց համալսարանը:  
Մինչդեռ նա ուսանում էր, սրտակից նամակներ  
էր գրում տուն ծնողներին, յոյսեր էր առել...  
Ահա նա վերջացրեց իր ուսումը—և տեսաւ  
փոխվել: Եւ այժմ, երբ նրա կառքը փողոցով նը-  
րան «վիզիտի» է պացնում, նրա մօտիկ ազգա-  
կանը, որին նա ամաչում է փողոցում ճանաչել,  
վիզը ձեռք, տխուր նայում է նրա ետեւից, և  
շատ երկար է նայում...

Մի ուրիշը, նոյն հասարակ դասից, աւարտե-  
լով միջնակարգ ուսումնարանը, գրպանը դա-  
տարկ, բայց գլուխը լի յոյսերով, առանց ալ և

ձախ նայելու, անդինտելեկտիւմը քայլերն ուղ-  
ղում է դէպի համալսարան. տրադիցիայի  
զօրութեամբ ուսանողները օգնում են չըբաւոր  
ընկերոջ: Նա աւարտում է հազար ու մի ներու-  
թիւններով, վրայն աչալի հաւաքած կողմիկներով,  
նայնպէս զղբը՝ է ձեռք բերում, և ինչ էք կար-  
ծում, նոյնպէս մոռանում է անցեալը, ոտի տակ  
է տալիս իր բարոյական պարտաւորութիւնները,  
և թէք էլ է ուզում այդ բարոյական պարտաւո-  
րութիւնների վրա...

Հարուստներից կան ուսումնաւարտներ... դը-  
րանց պատմութիւնն էլ լսեցէք: Գիւղեցիկ փողո-  
ցի վրա կառուցած չըեղ տան դահլիճներում դը-  
րաւիչ պատրաստութիւններ են տեսնված. զլլա-  
ւոր դրան առաջ հիւրերի կառքերը շարած են,  
այդ օրը տանտիրոջ օրդու, փոքրիկ գիմնադիւտ  
Սաշայի անուանակոչութեան օրն է. այդ առի-  
թով նախկին Բաղդասարի որդի Մարտիրոսը,  
իսկ այժմեան «իշը» հրաւերը ունի...

Մի ուրիշ փողոցում, ներքին յարկի մի սենեա-  
կում թափում են «իշը» եղբոր այրին իր փոքրիկ  
օրդիկներով, (ընթերցողը երեկ գուշակում է,  
թէ ով է դրանց այդ գրութեան հասցնողը)... Պար-  
դաւիտ ընթերցողը գուցէ կը կարծէ, թէ մարդա-  
սիրութեան զգացումները օրդու մէջ զարգացնելու  
համար, «իշը» այդ ուրախութեան մասնակից է  
անում նրա փոքրիկ աղքատ աղգականներին:  
Ոչ, «իշը» իր օրդուն հետ և պահում «ցնցոտա-



նում են, Վստոյա՞ծ որ չը տայ, ոսկէ գումար-  
նով էլ որ վարես, չի տայ:—Երկրագործութիւ-  
նը տեսնու է առ առաւելն 5 ամիս, իսկ 7 ամիս  
գիւղական ժողովուրդը, ամենամանչան բացա-  
ռութեամբ, մէջքի վրա պառկած ապրում է 5  
ամսվայ աշխատանքով: Աշխատող ձեռքերը շատ  
են, բայց վարելահողեր, արօտատեղիներ և հնձի  
տեղեր շատ օակաւ են: 50 տնից բաղկացած  
գիւղը անէլ, դառն է 100- տուն, բայց հողը  
նոյնն է մնացել: Մի ծուխ, որ սրանից 15 տարի  
առաջ 5 ուսողից էր բաղկացած, ուներ 10 օ-  
րավար հող, այժմ մի և նոյն ծուխը անէլ դառն  
է 20 հողի, բայց հողը դարձեալ նոյն 10 օրա-  
վարն է: Հողը արդարութեամբ չէ բաժանված  
ծխերի վրա: Օրինակ, մի ծուխ ունի 5 ուսող,  
—վարում է 10 օրավար, իսկ մի ուրիշ ծուխ,  
որ ունի 20 ուսող, վարում է դարձեալ 10 օրա-  
վար: Պարզ բան է, որ վերջին ծուխը աւելի  
չարդաշուքեամբ է ապրում, քան թէ առաջինը:  
Մէկը 50 տարի է տիրապետում ամենաարդա-  
ւանդ հողերին, իսկ միւսը դատապարտված է ա-  
մենայն տարի քարքարոտ և անպտղատու հողե-  
րը վարել ու ցանել: Հէնց այս պատճառով էլ  
ամին տարի գարնան սկզբներում արտերը վա-  
րելու ժամանակ գիւղացիները կախներն ու վե-  
ճերը հանում են ծայրայեղութեան: Զրկվածնե-  
րը բաւարարութիւն են պահանջում, վէճը տա-  
քանում է և շատ անգամ վերջանում է մարդա-  
սպանութեամբ, կամ դատարանն է ընկնում, և  
ահադէն ծայրերի և պարտքերի պատճառ դառ-  
նում:

Չը նայելով ամեն տեսակ թշուառութեան և  
ձախորդութեան, մեր գիւղացիները թայֆաներ  
կազմելու սէր ունեն: Թայֆաները կամ կու-  
սակցութիւնը գիւղերի մէջ պատահում են գլխա-  
ւորապէս ք ե օ լ ա մ ե ո ը նտերիս, քահանայ  
ձեռնադրելիս... Գիտցե՛ք մէկը քեօխլի հետ մի  
քանի կոպէկի անձնական հայելու ունի և կամ մի  
որ և է պատճառով նրա հետ լաւ յարաբերու-  
թեան մէջ չէ, իսկոյն իր քաւորներով, սանահէր-  
ներով, խնամքներով և այլ ծանօթներով կը կազ-  
մէ կուսակցութիւն քեօխլին պաշտօնադուրկ ա-  
նելու: Քեօխլան էլ ժողովում է իր շուրջը իր  
բարեկամներին: Երկու կողմից էլ առաջնորդո-  
ղներ ամեն օր բան ու գործը թողած՝ քաշ կը գան  
առ և առ... Երկու կողմն էլ գործում են ամենախայտառակ  
յամառութեամբ, իրանց խօսքը առաջ տանելու  
համար, չապիկներն անգամ ծախելու պատրաստ  
են: Թանգազին խմիչներ, գլխով շաքարներ և  
այլ զանազան տեսակ ընծաներ չարունակ լցնում  
են այն մարդկանց տները, որոնցից կախված է  
գործի աշխուշութիւնը: Կան մարդիկ, որ երկու  
կողմից ընդունում են ընծաներ և յուսալի խօս-  
քերով ճանապարհ գցում միամիտներին: Եւ այս  
կուսակցական կախները քիչ պատճառ չեն գիւ-  
ղացիների ներթափանց անապատութեան համար:

Այս կողմերի գիւղացու արքայութեան պատ-  
ճառներից մէկն էլ տղայ նշանելն ու պսակելն  
է: Առնուազը 150 րուբլի (բաշլըզ) պիտի

ն աղ զ վճարէ, որ կարողանայ մատանին հարս-  
նացուի մատը դնել: Գիւղական օրէնքով պիտի  
մի տարի նշանված մնան: Այդ մի տարվայ մի-  
ջոցում տղայի տիրոջ վրա շատ պարտաւորա-  
կան հարկեր կան իր խնամքներին պատելու  
համար: Գիւղացիների մեծ մասը իրանց տղե-  
րանց նշանում և պսակում են «վեր առի և  
պարտ եմ տալոյ» մուրհակներով, որով և ընկ-  
նում են վաշխառու հաշիւադանների ձեռքը և  
դառնում են նրանց կթան կովը: 5- ամիսը մի  
անգամ մուրհակը նորոգվում է, տոկոսը, որ սո-  
վորաբար թումանին 20 կօպէկ է, դրամագլուխ  
է դառնում և քանի գնում անում և մեծանում է:  
Հարսանիքը կայանում է. անցնում է մի ամիս  
թէ չէ վաշխառու հաշիւ աղան չըբում է իր գոնի  
բիկին, յափշտակում է նորահարսի զարդ ու դար-  
դարանքները, թողնելով խեղճին լաց ու սուգի  
մէջ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կ. ՊՕԼՍԻՑ մեզ գրում են յունիսի 6-ից մի  
մասնաւոր նամակով հետեւեալը: «Լուր կայ, որ  
այս օրերս խրիմեան Հայրիկը հրաւիրվելու է  
արքունի պալատը՝ հայոց վերաբերեալ խնդիրնե-  
րի մասին կարծիք յայտնելու և տեղեկութիւն  
տալու համար»:

Մեզ տեղեկացնում են, որ այս տարի Գօրու  
ուսուցչական սեմինարիայից՝ գիւղական վարժա-  
պետների վկայականով աւարտեցին հետեւեալ ան-  
ձինք. Միրաքեան Անդրեաս—չուլովերցի, Բալի-  
եանց—քութայիսեցի, Ղորիսմաղեանց—գօրեցի և  
երկու հայ երիտասարդներ—Յիւլիալ գիւղից:

ԳՕՐՈՒՑ մեզ գրում են. «Այստեղ շուտով կը  
ձեռնարկեն առաջին տեղական ընդերվնիյ  
գր ու ժ ի ն ա յ ի համար արքունական ընակա-  
րաններ շինել քաղաքի հիւսնա-արեւելեան մասում.  
նոյնպիսի ընակարաններ պիտի շինվեն տեղական  
միւս գորաբաժինների համար, որոնք գտնվում են  
Անդրկովկասի մի քանի ուրիշ տեղերում»:

Այսպիսայի հայոց դպրոցների նախկին ուսու-  
ցչաւորը՝ Եղբ խաղաւոր 5 սոգ ապագայը հետե-  
ւեալը. «Ձեր լրագրի № 64-ի մէջ տպագրված է  
Ախալցխայից հետեւեալը. «Տեղական հայոց դպ-  
րոցների նախկին ուսուցիչ Պ. Բորոգոյում յարձա-  
կում գործեց Ա. Յ.-ի վրայ: Նախկին ուսու-  
ցիչ խօսքը շատերին ենթադրել է տալիս, որ  
այդ ուսուցիչը, այն ինչ ուսուցչիներէն մէկն է,  
որոնք արձակված էին առաջ, փետրվարի 9-ին  
այստեղի դպրոցում պատահած դէպքի պատճա-  
ռով: Այդպիսի թիւրիմացութեան տեղիք չը տա-  
լու համար պարտք եմ համարում յայտնել, որ  
այդ Պ. ուսուցիչը նախկին չէ, այլ համարվում  
էր պաշտօնի մէջ, թէ և երկու ամիս դասերին չէր  
յաճախում՝ հիւսնագրութեան պատճառով, երբէք  
արձակված ինչ ուսուցչիների հետ կապ և յա-  
-

րաբերութիւն չէ ունեցել և մինչև անգամ եղել է  
Ա. Յ.-ի ջերմ համակրողներից մէկը»:

Այս օրերս Հայերէն գրքերի հրատարակութեան  
ընկերութեան վարչութեան նիստի ժամանակ  
մտնում է վանեցի մի ծերունի վարժապետ, ձեռ-  
քում ունենալով փառանքի մէջ կօշոված մի  
փաթեթ: Փաթեթը փառանքից ազատելով, հա-  
նում է իր հեղինակած մի գրութեան և յանձնե-  
լով վարչութեանը, խնդրում է ապագրութեանը  
յանձնել գրութեանը և վարձատրութիւն տալ ի-  
րանս: Վերոյիշեալ ընկերութեան վարչութիւնը  
ընդունելով գրութեանը, հարցնում է ծերունի  
վարժապետից գրութեանը բովանդակութեան մա-  
սին: Բանից դուրս է գալիս, որ ծերունի վար-  
ժապետը ճշնում է ապագրութեանը թէ հայերէն  
լեզուն մեր նախահայր Աղամի լեզուն է և որ  
Աղամի ու Եւան հայերէն լեզուով էին խօսում...  
Հրատարակչական ընկերութեան վարչութեան  
անդամները ժպտալով պատասխանում են ծե-  
րունի վարժապետին, թէ այդ գրութեանը պէտք է  
յանձնել խմբագրական մասնագիտունին, և երբ  
վերջինը կը վճռէ տպագրութեանը յանձնել այդ  
երկասիրութիւնը, այն ժամանակ վարժապետը  
կարող է վարձատրութիւն ստանալ: «Բայց ես  
փարայ կուղծմ,—աղեւսաբար խնդրում է վար-  
ժապետը,—ես ուսելու հաց չունեմ: Երբ այդ  
ևս չէ օգնում, վարժապետը բացակայում է.  
«Վերջապէս ողորմութիւն արէք, պարոններ, ես  
այդքան երկար սպասել չեմ կարող»:

Այն ժա-  
մանակ վարչութեան անդամները, տեսնելով կը-  
լ ա ս ի ք գրութեանը հեղինակի նեղ դրութիւնը,  
իրանց մասնաւոր միջոցներից դրամական նպաստ  
են տալիս խեղճ վարժապետին: Ափսոս որ վա-  
նեցի վարժապետը մի փոքր ուշացել է. եթէ նա  
մի քանի ամիս առաջ Հրատարակչական ընկե-  
րութեան նախկին վարչութեանը ներկայացնէր  
իր երկասիրութիւնը, այդ վերջինը անշուշտ համ-  
կը տպագրէր նրա հեղինակութիւնը, որպէս կը-  
լ ա ս ի ն երեց կ'լ ա ս ի կ ա գ օ յ ն ր, համ էլ լաւ  
վարձատրութիւն կը տար...

Կ. ՊՕԼՍԻՑ մեզ գրում են. «Ձեզ արդէն հա-  
ղորդվեցաւ, որ թիւրքաց միւսիստների խոր-  
հուրդը որոշել էր երկու մարդ՝ մէկը մահմետա-  
կան, միւսը քրիստոնեայ, ուղարկել հայաբնակ  
գաւառները՝ ընկնելու տեղանքի ազգաբնակչու-  
թեան դրութիւնը: Թիւրք միւսիստների այդ ո-  
րոշումը ներկայացրած էր Սուլթանին: Սուլթանը  
մերժել է և չէ ընդունել միւսիստների այդ որո-  
շումը»:

Լուսւ ենք, որ պ. Սօլոմոն Եղիազարեան ներ-  
կայ թաւականի մայիսի 26-ին կազանում մարդա-  
տորսի աստիճան ստանալու համար պաշտպա-  
նել է մի գիծեր տարածելու, որը կազմում է պ.  
Եղիազարեանի ձեռնարկած մի շարք հետազո-  
տութիւնների առաջին մասը: Այդ աշխատու-  
թիւնը վերաբերում է հետեւեալ հարցին՝ «Исследо-  
вание по истории учреждения въ Закав-

չէ կարելի, որովհետեւ ներքին կեդրիք չէ կարելի,  
որովհետեւ ներքին չէ կարելի այն բանը, որ մի  
մարդ իր դաւանաւոր հակառակ գործէր...

Մեր ուսանելիների այդ դիրքը արդէն սկսում  
է իր հետեւանքներն ունենալ. ժողովուրդը ունեցած  
հայեացքը զրանց վերաբերութեանը փոխվում է:  
Մի ժամանակ ծնողները պատկառելի աչքով էին  
նայում ուսում առնողի և ուսեալի վրա: Ուս-  
ման հետ կապված էր նիւթական ապահովու-  
թիւնը, երջանիկ կեանքը: Այժմ՝ այդ չը կայ: Մի  
բան է մնում, այդ այն բարոյական ներգործու-  
թիւնն է, որ կարող է ունենալ ինտելիգենտ, մը-  
տաւոր բարձրութեան վրա կանգնած մարդը ժո-  
ղովրդի վրա: Հարկաւոր է օրհնել, որ զօնէ  
ուսման հետ կապված լինի բարոյական ոյժի բա-  
րոյական արժանաւորութիւնները... Եւ միթէ հար-  
կաւոր է բացատրել, որ եթէ ժողովուրդի աչքում  
կրնկին ուսեալ մարդու բարոյական ոյժի հա-  
ւատն էլ և ժողովուրդը այն համոզմունքի կը  
գայ, թէ ուսման հետ չէ կապված ոչ նիւթա-  
կան ապահովութիւն,—որ ամենամեծ իղէալն  
էր,—և ոչ էլ բարոյական հաղապիտ առաքինու-  
թիւններ,—այն ժամանակ նոյն ժողովուրդը կը  
սկսի ուսման վրա նայել այնպէս, ինչպէս գիւ-  
ղացին նայում է իր միջից գօրու եկած, և իր  
հետ ապրող ճարպիկ զօրգրի վրա...

КАЗЕНА: Այդ ընդհանուր վերնագիրը կրող աշ-  
խատութեան առաջին մասը, որը կազմում է պ.  
Եղիազարեանի դիւերտացիան, հետեւեալն է. գիւ-  
ղական համայնք. դասակարգային կազմա-  
կերպութիւնը. համայնքի ներքին կազմակերպու-  
թիւնը և կառավարչութիւնը՝ հողատիրապետու-  
թեան, ուղղման հարցի և հարկատուութեան հետ  
միասին Պ. Եղիազարեան աջողութեամբ պաշտ-  
պանելով իր դիւերտացիան, ստացել է արդէն  
մա գիւտորոսի աստիճանը: Պ. Եղիազարեան  
զբաղված է իր ձեռնարկած աշխատութեան երկ-  
րորդ մասի մշակութեամբ:

Ամսիա 12-ին Թիֆլիսի Ալեքսանդրեան ուսուցչա-  
կան ինստիտուտում վերջացան քննութիւնները: Ա-  
ւարտեցին 15 աշակերտ, որոնցից 8-ը ուսու, 4 վրա-  
ցի և 3 հայ: Հայերը հետեւեալ անձինքներն են՝  
Քրիստափոր Թադէոսեանց—վերին-ազուկեցի, Ստե-  
փան Տէր-Աւետիքեանց—Գանձակի գաւառի Բա-  
նանց գիւղից, և Ստեփան Մեղրեանց—Գանձա-  
կի գաւառի Զովդար գիւղից:

Երեւն ԱՆՏԻՑ մեզ գրում են. «Ամսիա 6-ին կա-  
տարելից տեղիս ս. Գայիանեան օրիորդաց դպրո-  
ցի տարեկան ակորդի Գալոցի տեսուչ հայր Մե-  
լեան հրապարակաւ յայտնեց իր հրաժարականը  
դպրոցի տեսչութիւնից: Կարգադիցան տեսեալա-  
կան և ուսումնական հաշիւները, որոնցից երեաց  
որ այժմ դպրոցն ունի մօտ 3,000 րուբլի փողը,  
Հանդիս վերջում արկելին աւարտող 11 աշակեր-  
տուհիներին վկայագիրներ: Ակտին ներկայ էր կա-  
նանց հաւագին բաղմութիւն, նաև ս. փոխնորդը  
Թեմական դպրոցի նոր հոգաբարձութիւնը նոր  
ուսուցչական խումբ կազմելու համար դարձեալ  
վարձեց նախկին տեսուչ Բիւլի Մ. Բարութիւ-  
նեանցին: Ուսուցչական խումբը մասամբ կազմա-  
կերպված է, վարձված են 9 հոգի հին ուսուցիչ-  
ներից և արձակված են հինգը»:

Մեզ գրում են Երեւն ԱՆՏԻՑ. «Տեղիս քաղաքային  
ձայնաւորների ընտրութիւնը, որը արդէն վերջա-  
ցած է, բաւական աշուղ կարելի է համարել, և ե-  
րիտասարդ և հասակացող ձայնաւորներ բաւական  
թիւով ընտրված են, այնպէս որ յոյս կայ այսուհետեւ  
դուսման անելի դիտակցաբար կը գործէ: Բայց ցա-  
ւալին այն է, որ մի քանի անձնաւորութիւնների  
չընտրվելու պատճառով, գլխաւորապէս թուրքերը  
գանգատվել են այդ ընտրութիւններից քանակու-  
համար: Ասում են, որ իբրև թէ առաջին—երկ-  
րորդ կարգի ընտրութիւնները կը քանդվեն: Ըն-  
տրված են 57 հոգի հայեր, իսկ թուրքեր՝ 15 հո-  
գի»:

Ներկայ յունիս ամսի 17-ից փոփոխութիւն-  
ներ պէտք է լինեն Անդրկովկասի երկաթու-  
ղու մարդատար և ապրանքատար գնացքների  
երթիւնութեան ժամանակին մէջ: Բաթումից մար-  
դատար գնացքը դուրս կը գայ առաւօտեան 8  
ժամ 10 րոպէին, և Թիֆլիս կը հասնի երեկո-  
յեան 10 ժամ 58 րոպէին: Թիֆլիսի կայարանից

Ձի կարելի ասել թէ մեր ուսեալ դասակարգը  
զուրկ է իղէալներից. նա գիտութեան տաճար-  
ներում գաղափարների հետ շատ է ծանօթացել:  
Նա շատ լաւ գիտէ, թէ որն է լաւ և որը վատ.  
նա գիտէ թէ ուսումնարանում ինչպէս պէտք է  
անել լաւ վարժապետ և լաւ տեսուչ լինելու  
համար, նա գիտէ թէ ընտանիքում ինչպէս պէտք  
է վարվել բռնաւոր ամուսին չը լինելու համար.  
նա գիտէ թէ ինչպէս պէտք է մասնակցել հասա-  
րակական գործերին, «կեդձ» և «աջակապ» չը  
համարվելու համար, նա գիտէ, թէ ինչպէս պէտք  
է ծառայել այս և այն գործին, և ինչպէս պէտք  
է տնել, լաւ մարդ լինելու համար,—բայց նա  
այդ բոլորը չէ գործադրում, և շատ անգամ էլ  
չէ կարողանում գործադրել: Որ կը գայ ժամա-  
նակ, երբ այդ բոլորը կը ցանկանան և կը կա-  
րողանան գործադրել,—զրան համարձակօրէն հա-  
ւատում ենք, և հէնց այդ բանին հաւատալով,  
առանց մի վայրկեան անգամ խղճահարկելու,  
երեսով ենք տալիս և պէտք է տանք այն պա-  
կասութիւնները, որոնք այժմ տիրապետում են  
մեր կրթված դասակարգի և հասարակութեան  
յարաբերութիւններին մէջ:

Ին. Տէլ.

Այդ մասան բարոյական հասկացողութիւնների  
ստոր քաղիմանի վրա է կանգնած. մարդասիրու-  
թեան գաղափարը նրա մէջ այնքան գործադրու-  
թիւն ունի, որքան մարդը է գործել իրան  
անյայտ մի ինստինկտի ազդեցութեան տակ, իսկ  
միւս կողմից ընդհակառակն, տնտեսական վատ  
դրութեան և ուրիշ հանգամանքների պատճառով  
նրա մէջ շատ զարգացած են զանազան, ստոր  
ինստինկտներ:

Մեր ժողովուրդի մտաւոր և բարոյական հորիզո-  
նը եղել է միշտ սահմանափակ, նրա կեանքը  
զանազան հանգամանքների շնորհով, մինչև այժմ  
էլ պահպանել է իր մէջ զանազան բարոյական  
ախտեր, և իրան յատուկ պակասութիւններ: Յա-  
ւալին այն է, որ այդ կեանքը իր մեծ ներգոր-  
ծութիւնն ունի «ուսում առաձնելու» վրա. և  
հասարակութեան ինտելիգենտ դասակարգը, մը-  
տաւոր չըջանը աղատ չեն մասսային յատուկ  
բարոյական թերութիւններից. գիտութիւնը և ու-  
սումը չեն կարողացել ընթել այն արհեստական  
չեղտը, որ տարիներով նստել է հայի հոգու վրա  
թէ ընտանեկան կրթութեան և թէ հասարակա-  
կան կեանքի ուղղութեան շնորհով: Մեր բանաս-  
տեղծի իղէալական մայրը երկխային ջնեցնելիս  
ասում է. «չուտ մեծացիր ու մարդ դառ, լիւր  
պիտանի հայրենիքիդ... բայց սովորական կեան-  
քի մէջ, հայ մայրը՝ իր երկխային օրօր է կարդում.  
չուտ մեծացիր, մարդ դառ, ու հարստացիր»:

Հայ ինտելիգենտին ոչ մի բարոյական կապ չէ  
կապում այն ընդհանրութեան հետ, որից նա  
դուրս է եկել. նա միշտ իր համար ստեղծում է  
անփական «բարօրութեան» դադափար, որը ի  
հարկէ, ամեն բանից վեր է դասում: Եւ այդ բանի  
մէջ մեղաւոր է ինքը հասարակութիւնը, որի մէջ  
ծնունդ են առնում այնպիսի երեւոյթներ...

Սակայն դա մի սովորական դրութիւն է, որը  
եթէ զարմանալի չէ, այնու ամենայնիւ ներդա-  
մութեան էլ արժանի չէ: Այդ պատճառով էլ  
հասարակական հանգամանքների շնորհով ան-  
պայման ներդաժմիտ լինել զէպի ուսում առած  
մարդկանց հակակրկի վարմունքը, ոչ կարելի է,  
ոչ էլ պէտք է: Եթէ մի աղէտ, որ և է «չուտ» չը  
տեսած մի վաճառական կամ մի արհեստաւոր  
իր կեանքի մէջ սկզբից մինչև վերջ գործադրու-  
թեան մէջ է պահում հասարակական կեանքի  
կազմակերպութիւնից բղխող ախտերը, այդ  
գիւղ չէ նշանակում, թէ նոյնը կարող է անել  
և պէտք է անել և ինտելիգենտ, և ուսում առած  
մարդը. ում շատ է տուած, նրանից էլ շատ է  
պահանջում... Ահա ձեզ մի կրթված համար-  
վող մարդ, մի ուսեալ, մի բժիշկ, մի իրաւաբան,  
համալսարանի զիպլովը ծոցին մի մարդ,—նա  
խօսում է, մեծ մեծ բրդում է, քննադատում և  
մեծ մեծ խոստումներ է տալիս,—բայց գործի  
եկած ժամանակ դաւաճանում է իր բոլոր ասած-  
ներին, սկզբունքներին,—ներկ նրան, ի հարկէ,



գնացքը դուրս կը գնայ դէպի Բագու գիւղերէն 12 ժամ 13 րոպէին, և Բագու կը հասնի երեկոյան 6 ժամ 40 րոպէին: Մարդատար գնացքը Բագուից դուրս կը գնայ ցերեկվայ 12 ժամ 42 րոպէին, և թիֆլիս կը հասնի առաւօտեան 7 ժամ 57 րոպէին: Թիֆլիսի կայարանից մարդատար գնացքը դուրս կը գնայ առաւօտեան 9 ժամ 3 րոպէին և Բաթում կը հասնի գիշերվայ 11 ժամ 55 րոպէին:

Բագուի հայոց երկսեռ դպրոցներէ տեսուչ Ա. Գալստեան խնդրում է մեզ տպագրել հետևեալը. «Բագուի հայոց դպրոցներէ հոգաբարձութեան կողմից ուղարկելով ձեզ այս հաշիւը, խոստովանում եմ բարեհաճել տպագրել այդ գիտութիւն նուիրատուներէ Ներկայ 1889 թ. փետրվարի 7-ին, տեղիս հայ սիրողների խումբը՝ առաջնորդութեամբ տիկին Եւանդուկանցի և Թամ. Կաճկաճեանցի տուել էին մի հայերէն ներկայացում: Բագուի Բեյաթական դպրոցի և հայոց երկսեռ դպրոցների աղքատ աշակերտների և աշակերտուհիների օգտին Ներկայացումներից գոյացած գումարը արդիւնքի կէս մասը, որ էր 242 ր., ստացել էր հոգաբարձութիւնը որոշեալ նպատակին գործադրելու համար: Նոյն թվականի Զորահանգ տօնի ճրագվայց երեկոյան» եկեղեցում ժողովել էի գանձանակադրամ 25 ր. 5 կոպէկ: Խորհրդի անդամ և դպրոցների հոգաբարձու պ. Պետրոս Տէր-Մարկոսեանցի աշխատութեամբ հանգանակած էր մի քանի բարեխնայ անձինքներից՝ 52 րուբլի: Պ. Յովհաննէս Միրզա-Աւարեանցի իր հանդուգնաւ խորթ դստեր՝ Աննա Համբարձումեան Թառուսեանցի եօթներկիկ առիթով փոխանակ սեղան սարքելու՝ նուիրել էր հոգաբարձութեան 100 ր.: Ուսուցչական խումբն ևս նոյն նպատակով—12 րուբլի: Պ. Համբարձում Մելիքեանց նուիրել էր 25 ր.: Օրիորդաց դպրոցի չորրորդ բաժանման օրիորդներն ևս հանգանակութեամբ ժողովել էին իրանց բարեկամների շնորհներով՝ իրանց չքաւոր ընկերակիցների օգտին 93 ր. 67 կոպէկ: Ուրեմն 1889 ռուսական տարվայ ընթացքում Բագուի հայոց ծխական երկսեռ դպրոցների աղքատ աշակերտ-աշակերտուհիների օգտին ժողոված է ընդամենը—549 ր. 72 կ. այն պայմանով, որ այդ գումարներով հոգացվին ներանց հաղուստը, ոտնամանները և դասաւանդական պիտույքները: Վերոյիշեալ գումարից վճարված է պ. Գր. Թումայեանցի խանութին 1887/8 թվականի պարտքը՝ ի հաշիւ աղքատ աշակերտների համար գնած շորերի՝ 26 ր. 89 կոպէկ: Ուսուսման արանի աշակերտների և աշակերտուհիների համար այս տարվայ կազմած գրախնական հանդիսի օրը բաժանված են նրանց այլ և այլ իրեղեններ՝ 37 ր. 5 կոպէկի: Ուսուսման արանի 55 չքաւոր տղաների և օրիորդների համար գնված են հագնելիք և վճարված է ընդամենը—298 ր. 62 կ.: Գաղաւաղական պիտույքների և զրբերի՝ 15 ր. 30 կոպէկ: Ուրեմն ծխական է ընդամենը 313 ր. 92 կոպէկ: Հանելով ծախքի գումարը մուտքի գումարից մնում է յօգուտ չքաւոր աշակերտների հոգաբարձութեան գանձապահի մօտ դարձեալ 235 ր. 80 կոպէկ, որը պիտի դորձադրվի նոյն նպատակով գալ ուսուսման տարվանից:»

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՒՍՏՐԻԱՅԻՑ

Վիեննա, յունիսի 5/17-ին

Անցեալ երկուշաբթի օր դուրս եկալ Թիֆլիսից և այսօր, երկուշաբթի, 7 օրում հասալ Վիեննա, առանց ոչ մի տեղ իմ ճանապարհորդութիւնս ընդմիջելու: Այսօր առաւօտ հասալ Վիեննա և այսօր երեկոյան ուղևորվում եմ Պարիզ Ուրեմն 9 օրում Թիֆլիսից Պարիզ կը հասնեմ:

Որովհետեւ շատերն մեր երկրում հետաքրքրում է Պարիզի ցուցահանդէսը և շատերը մեր կողմերից ուղևոր են գնալ Պարիզ, ուստի անհրաժեշտ եմ համարում հաղորդել Մշակի միջոցով մի քանի տեղեկութիւններ երկրպագույնի գնացողներին և նրանց գնելու մասին:

Ներքև թաթում հասալ, ինձ սկսեցին նոյնը հաւատացնել, ինչ որ ասում էին Թիֆլիսում, իբր թէ Օղէսայից ուղևակի գնացքներ կան Պարիզ, այն էլ պակասեցրած գներով: Հասնելով Օղէսա, իմացալ, որ այդ բոլորը կատարելապէս սուտ լուրեր էին Օղէսայումն էլ սկսեցին ինձ հաւա-

տացնել որ ուսուսման տարիական սահմանից, Պարիզից անուանված տեղից կան այդ տեսակ անմիջական գնացքներ. մինչև Պարիզ, պակասեցրած գներով, ապա ասեցին որ ոչ թէ Պարիզից, այլ Լէմբերգից այդ տեսակ գնացքներ կան: Այդ բոլորն էլ սուտ յայտնվեց: Այժմ Վիեննա հասած լինելով, իմացալ որ դէպի Պարիզ պակասեցրած գներով գնացքներ (գնալու և վերադառնալու համար) կան միայն Կ. Պոլսից, Պետերբուրգից, Մոսկովայից, Վիեննայից և Հառլից: Վիեննայից դէպի Պարիզ գնում են հետեւեալ երեք պետական գնացքներ. մին՝ արագընթաց զընացքը ամեն օր երեկոյան և արժէ Պարիզ դընալու և այնտեղից դալու համար ընդամենը 180 ֆրանկ, երկրորդ կարգը, փոխանակ 264 ֆրանկ կիւ Ներքորդ գնացքը արևելքից (Կ. Պոլսից) եկող և Վիեննայով անցնող գնացքն է, որը ունի մի միայն I կարգ վագոններ և բաւական թանգարժէ, չա էլ գնում է ամեն օր: Վերջապէս Վիեննայից դէպի Պարիզ գնում է train de plaisir սոված գնացքը, որը շատ էժան է, արժէ գնալու գալու համար ընդամենը 100 ֆրանկ, բայց գնում է Վիեննայից միայն ամիսը 2 անգամ: Հետագայում եմ վերջացնել նամակս: Այժմ 7 ժամ է, իսկ ութին պէտք է նորից ճանապարհ ընկնեմ: Բաւական յոգնեցուցիչ ճանապարհորդութիւն է:

Գ. Ա.

### ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻԱՅԻՑ

Կ. Պոլիս, 6 յունիսի

Գոհունակութեամբ շարքի մը անդուցնելով, Վանի բանտարկեալներու աղատութիւնը, նոր Գաղաւաղական ժողովի մը ընտրութիւնը, «Արեւելք» վերաբացումը, ահաւասիկ այս շարքի միւր հաշուելիքը:

Մայիսի վերջին օրն, չորեքշաբթի առաւօտ, թուրքերու պաշտօնական թիֆլիզ՝ «Թարիք» կը հրատարակէր պատճեն հնազանդական ուղերձի մը, զոր հարկեր չափ վանեցի հայեր ստորագրելով, յղած էին արքունի պալատին Այդ ուղերձով ստորագրողները կը յայտարարէին թէ՛ ինչ որ Եւրոպայի մէջ կը հրատարակվի ընդդէմ թուրքերու վարչութեան ի Հայաստան, ինչ որ այդ վարչութեան դէմ կը խօսուի զանազան տվումներով մէջ (հասնողին ակնարկութիւն Անգլիոյ խորհրդարանին է) ամենքն ալ անհիմն են. թէ իրենց վանեցիք կատարելապէս գործ են օսում: Նանա կառավարութեան ընթացքն և իրենց կառավարիչ խումբը պէտք է՝ Տեղական բոլոր լրատվութիւններն այդ հնազանդի պատճենն արտատպեցին: Իսկ երէկ նոյն «Թարիք» զարձեւալ կը հաղորդէր թէ՛ Վանայ բոլոր բանտարկեալներն—ի հարկէ լրատվական բանտարկեալներն—արձակուրդ են կայսերական հրամանաւ: «Արեւելք» եկած հնազանդի մը նոյնը կը հաստատուէր: Արձակեալները գովաբանական մաղթանքներ մատուցած են կայսեր կենդանին համար: Յայտնի չէ թէ Արիւրի կեան Տրիպոլիս աքսորեալներն ալ պիտի արձակուին թէ ոչ:

Նոր Գաղաւաղական ժողովի ընտրութիւնը հանրային մտածութեան առարկայն եղած էր, և յունիսի 2-ին կատարուած ընտրութիւնը ընդհանուր գոհունակութիւն պատճառելու ընդմիջ ունէր: Դրն է Բիշնիկներէն ոչ ոք մտաւ նոր Գաղաւաղական ժողովին մէջ և մենք, որ սովոր էինք Սիմօն պէյի յաջորդել տալ Նուրեան էֆենդի, Նուրեան էֆենդիի յաջորդել տալ Սիմօն պէյ, այս անգամ փրկուեցանք այդ կաշկանդումէն: Էֆենդիներէ միայն Նորատունկեան Գաբրիէլ էֆենդին մտաւ այդ Գաղաւաղական ժողովին մէջ: Բայց ժողովրդական է Գաբրիէլ էֆենդի Նորատունկեան Տասերկու տարի առաջ «Արաբատեան ընկերութիւնը», որ իր մէջ ոչ մի էֆենդի կընդունէր, բացառութիւն ըրաւ միայն Նորատունկեան Գաբրիէլ էֆենդիի համար. ոչ միայն ընդունեց զնա իրեն անդամ, այլ և ընտրեց իրեն նախագահ, և այդ նախագահութիւնը պատւարեւեղաւ և օգտաւէտ Գաբրիէլ էֆ. Նորատունկեան մնացած է ժողովրդական, և այժմ նոր Գաղաւաղական ժողովի մէջ, որուն պիտի պիտի լինի հաւանորէն, թէ ընդդէմի անդամակցութիւն, կարող է ցոյց տալ իր խոնակաւորութիւնը, աղքատ սիրութիւնը, և մեր ու օսմանեան կառավարութեան շահերուն միջև համեմատելութիւն հաստատելու և պահպանելու յաջողի, զի՞ յայտնալ կը յուսացուի: Այսպիսով չենք թէ Գաբրիէլ էֆենդի Նորատունկեան պիտի ընդունի թէ ոչ իրեն տրուած պաշտօնը, բայց եթէ ընդունի ահաւա-

սիկ զորոնքութեան ասպարէզ մը. և ժամանակի բերմունքն այնպէս է, որ ամեն հայոց աչքեր իր վրայ պիտի յառնու: Այնկաւորութիւնները մեծ են, արդիւնքին պիտի սպասենք անհամբեր:

Այդ Գաղաւաղական ժողովի ընտրութիւնը ապագայ մը եղաւ Ազգ. ժողովի լրջամտութեանը: Տասն և չորս անդամներէն միայն տասներկուը ընտրել կարելի եղաւ: Իբր կառավարական պաշտօնեայ Գաբրիէլ էֆենդի Նորատունկեանն է. այնուհետև Արիւրի էֆենդի Ունեան կը նկատուի կէս կառավարական մարդ. իբր վաճառական և քիչ մ'ալ իբր սեղանաւոր, շատ գործ ունի կառավարութեան հետ. ծանօթ է նախարարներուն, և կարող է օգտակար ըլլալ ազգին: Հարուստ, ամուրի, ոչ ումը կարօտ, մի քիչ—կամ լաւ եւ մի շատ—միապետական պիտի կարենայ ծառայել: Վերջին մի քանի տարիներու մէջ, Հայաստանի սովին սկսեալ, շատ ժողովրդական եղած է Արիւրի էֆենդի Ունեան:

Գաղաւաղական ժողովի մնացեալ տասն անդամներն ամենքն ալ առևտրական դասին կը պատկանին. անկախ, հարուստ, միջերեսն ունենցող լաւ, ամենքն լաւ տրամադրութիւններ ունենցող, ունեց մի քիչ վարանոտ, ունեց արիւր, այս է վերի վերայ այդ ժողովի պատկերն: Մնացեալ երկու անդամներն ալ կընտրուին այս շարքի:

Որքան մտածութիւններ, որքան աշխատութիւններ այս ընտրութիւնը յաջողեցնելու համար, և ընտրութիւնները կատարուեցան, ջանքախիշ մեծամասնութեամբ, այնպէս որ երբ ուրիշ Գաղաւաղական ժողովներ ընտրված են 14 կամ 17 քուէներով, այս Գաղաւաղական ժողովին անդամը 33 էն մինչև 57 քուէ ստացան, ինչ որ դժուարաւատալի կը թուէր: Բայց երեցիկութիւններն համաձայնեցան սկզբունքներով: Անհրաժեշտ հարկ դառնցին փորձել այս անգամ ալ անկախ մարդերու պաշտօնավարութիւնը: Տեսնեցէ իցէ թէ փորձը մեզ նպատակաւոր ըլլայ: Առ այժմ այս կարևոր խնդրին վրայ այդքան: Ահա ի տեղեկութիւն յաջորդ նստին վերջը:

Նոյն յունիսի 2-ի նստին էր, որ Ազգ. ժողովը մերժեց պ. Թիւրքեանին հրաժարականը յատենապետութիւնէ Ազգ. ժողովի: Անցեալ շրջանի փոթորկալից օրերուն մէջ պ. Թիւրքեանն այնպէս իմաստուն մտքով, անկողմնակալ ոգով, և անկեղծ ազգասիրական սրտով ղեկավարեց Ազգ. ժողովը, որ ամեն կուսակցութիւններ խոնարհեցան իր առջև, յարգեցին և մեծարեցին զինքը:

Գոհաբանական այս ներդաշնակութեան մէջ իբր աներաժիշտ ձայն, կը հնչէր «Արեւելք» բացակայութիւնը. վերջապէս «Արեւելք» ալ կը սպասէր իր ապաշխարանքի վերջնաւորուն. հաղիւ թէ ուր օր դադարեալ մնաց և վերադարձը արտօնութիւն ստացաւ հրատարակուիլ, ինչպէս իրեն հետ վերադարձին սկսան հրատարակուիլ յունաց «Նէօլոգոս» և ֆրանսերէն «Միսպուլ»:

Եւ լաւ ժամանակի մը եկաւ մեզ երգիչ պ. Շահլամեանց. ուրախութեան ձայներ լսելու փորձ ինչ սիրտ ունենք: Պ. Շահլամեանցի զաւուստը իբր նպատահար կը նկատուի աստ Շաբաթ օր մը կը հասնի պ. Չատիկ Բօթովիչի հետ միասին, յաջորդ օրը կը թափան Պատրիարքի աջն համարուել և պարգևաբաշխութեան հանդիսի մը մէջ կիւնանա: Գոհ-Գաբրիէլ, Պոլսի էն ընդարձակ թաղի պարզեղանակութեան հանդէսը կը կատարուի և Պատրիարքը կը խնդրէ պ. Շահլամեանց այդքան միացեալ հայերը ուրախացնել, իրենց սրտերը թուր հանել, և պ. Շահլամեանց կերպէ «Եւրեմիան», այդ Պոլսի սիրելի երգը, Արաբատեան տետրերէ: Յաջորդ օրը պ. Շահլամեանց օրուան մարդը կը ըլլայ, շաբաթ մը վերջ Սահմանադրութեան տարեդարձն է, հոն ինքն ալ Եւրոպայից անհրաժեշտութիւններ, Զարիքի և Պատրիարքի, Զեքալի ու Պէրպէրեանի հետ միասին հոգեպարար բաժակներու կը մասնակցի և իր «Եւրեմիան» վրէժ յոգիչ նորութիւնը կը ըլլայ: Այլ ևս պրծաւ պ. Շահլամեանց պէտք է գնայ Բայց ուր. ով ղիւրը կը թողու. ուսեալն ու անուսը, հարուստն ու աղքատը, այդ ու (ըսենք կին) ամենքն Շահլամեանցական են, և պ. Շահլամեանց կը մնայ դեռ այստեղ երկու շաբաթ. ընտանեկան նուազանքներու պէտք է յաջորդէ հանրային նուազանքներու մը, զոր կը սարքէ նորակալմ «Քեմա» ընկերութիւնը. այդ նուազանքները տեղի կունենայ յունիսի 18-ին:

Գեղեցիկ օրերը, մերթ տաք, ստեպ զով սիրելի ու անտրեղի կընձայն Պոլսի այս միջոցի օտարաշխարհայ հայոց, որոցմէ ունեցանք մի քանի տիկնայք ու օրիորդք:

Այս առաւ «Արեւելք» կը հաղորդէ պ. Գրիգոր Արծրունի ուղևորութիւն ի Բարիդ Այդ լուրն, որ արդէն բաւական տարածված էր, շատ գեղեցիկ տպագրութիւն կը թողու այստեղ: Ամենքս ալ կը փափագենք, և ջերմագին կը փափագինք, որ պ. Արծրունի իր վերադարձն ընէ Պոլսի վրայ: Այսպիսով աւելցնելով, որ եթէ պ. Արծրունի չը վերադառնայ Պոլսի վրայով, ոտնակոխ ըրած պիտի ըլլայ մի մեծ պարտականութիւն «Մշակի» խմբագրին, որ այդքան տարիներ Պոլսով զբաղած է, Պոլսը մօտէն մի անգամ տեսնելու պարտականութիւնն ունի, մանաւանդ երբ առիթը կը ներկայանայ:

Հայկակ

## ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Շխեռու դէմ այժմ Գրանտիայում կազմվել է մի ընկերութիւն, որի նպատակն է պատերազմել մարդկանց այդ վատ սովորութեան դէմ: Վերոյիշեալ ընկերութիւնը հրապարակական դաստիարակութիւններ է կազմում, իսկ այս օրերս դիմաց ֆրանսական ամենանշանաւոր գրագէտներին իմաստաւոր նրանց կարծիքը ծխելու մասին Նրանցից մեծ մասը գրաւոր կերպով պատասխանեցին: Վերոյիշեալ նամակներից երևում է, որ այդ գրադիտներից միայն երկուսը միասնակար չեն համարում ծխել: Եւրոպայում գրում է. «Ես որոշ կարծիք չունեմ ծխելու մասին: Տաս թէ տասերկու տարի առաջ, երբ կարծում էի, թէ սրտի հիւանդութիւն ունեմ, ես, բժշկի խորհրդով թողի ծխելը: Սակայն ես կարծում եմ, որ անհրաժեշտ են գիտական համոզեցուցիչ ապացոյցներ ծխախոտի լաւ կամ վատ ներգործութեան մասին գրական աշխատանքի վրայ: Ես ճանաչում եմ մեծ գրողներին, որոնք շատ էին ծխում, բայց նրանց ուղեղը շատ կանոնաւոր էր բանում: Շատ կարելի է համաճարեղութիւնը մի տեսակ ջրային հիւանդութիւն է, բայց այդ բանից չէ հետևում, թէ պէտք էր բժշկվել դրանից: Վատ սովորութիւնների բացակայութիւնը այնքան տաղտկալի բան է, որ ես շատ անգամ ցաւում եմ ծխելը թողնելու մասին: Այնքանից Գրիս-Գրիսի առում է. «Ես շատ ուշ սկսեցի ծխել և թողի այդ սովորութիւնը, երբ նկատեցի, որ ծխելուց զուրկ լըս պտույտ է դալիս: Վեց ամիս է ծխելուց յետոյ տեսալ, որ զվիս պտույտները անցան: Ինչ էլ որ լինի, ես ծխախոտ և խմիչները մտաւոր գործունէութեան ամենապարտաւիր թշնամիներն եմ համարում, բայց կարծում եմ, որ ոչոքին չի աջողվի այդ չարիքի դէմ: Ես յիշում եմ յիշաւի, շատերն այնքան կոչու ուղեղ ունեն, որ ծխախոտը չէ կարող միանալ նրանց: Իսկ նուրբ մտածողութեան ընդունակ մարդկանց ցանկայի կը լինել ցոյց տալ ծխախոտի միասնակարութիւնը: Օկտավ Ֆելիէ գրում է. «Երիտասարդութեան ժամանակ շատ էի ծխում և ինձ համար շատ դժուար էր չը ծխելը: Մի քանի տարի առաջ ես սովորեցալ վերջնականապէս թողնել ծխելը իմ ջրային հիւանդութեան պատճառով, որ չէի կամենում վերադարձ ծխելուն: Սակայն ստիպված էի վերապէս աչքերս բանալ, երբ ջրային հիւանդութիւնս ստակալաւ, և ուշադրեցութիւն ու ստամոքսային ցաւերը սկսեցին յաճախ կրկնվել: Ես համարեա անտանելի դժբանք: Առանձնապէս ես համոզված եմ, որ ծխախոտը շատ միասնակար է, մանաւանդ ջրային մարդկանց համար: Նախ և առաջ ծխախոտը թիֆիզ կերպով գրգռում և հարբեցնում է, իսկ վերջը քուն է բերում: Նա ընեցնում է հոգեկան ոյծերը: Պէտք է ընդգիծալորել այդ արբեցուցիչները, և սեփական անձի դէմ մղված այդ կռիւը յոգնեցնում է հոգին և բխանցում է կամքը:»

Գերմանական հիւրանոցներից մէկում նորերս փորձ է փորձվել էնկտրականութեամբ կերակուր պատրաստելու,—և փորձը աջողվել է:

Մայիսի ընթացքում Պարիզի ցուցահանդիսին այցելել է 2,208,945 հոգի: Վճարովի տոմսակներում:

Անգլիական պարլամենտում այս օրերս հաշիւ էր տրվում Լոնդոնում քաղցածութիւնից մեռած մարդկանց մասին: 1888 թվին այդպիսի մահով մեռածների թիւը 297-ի է հասել: Տիւուր փաստ:

Իտալիայում 42 համայնքները սկզբունքով ընդունել են հանդուգնալների դիակները արկելու սխտեմը: 21 համայնքների մէջ այդ սխտեմը արդէն գործադրվում է:

Բամազանի տօներին Կ. Պոլսի մեծ մզկիթներում և մէղրեսներում տեղի ունեցան ցոյցեր: Թիւրքաց գրող հայի Իբրահիմ-էֆենդին մի ուսումնաւորն է պահում, որ սովորեցնում է արաբական լեզուն երկու տարու, այն ինչ սօֆիստները նոյն լեզուն մէղրեսներում սովորեցնում են տաս տարվայ ընթացքում: Այժմ հաշի Իբրահիմի և շատ մէղրեսների մէջ երկպառակութիւն է ծագել, որովհետև զիտական սօֆիստները նայում են հաշի Իբրահիմի վրայ, որպէս մասնատական կրօնի թշնամու վրա, որը հնչաացնելով արաբական լեզուի ուսումնասիրութիւնը, զբաղվել իբր թէ խախտում է աւանդական մէղ-



Բնակիչները հիմնականում Մի սովորություն կայ, որով  
Բնակիչները հիմնականում Մի սովորություն կայ, որով  
Բնակիչները հիմնականում Մի սովորություն կայ, որով

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐՈՎԻՉ, 12 յունիսի Գրքանոցների մի-  
նիստությունը հրատարակել է ներկայ տարվա  
առաջին թվականի ծախքի և մուտքի վերաբե-  
րեալ հետևյալ թվերը: Սովորական մուտք եղել  
է 196.135.000 ռուբլի, արտասովոր մուտք եղել  
է 5.660.000 ռուբլի: Ելել է սովորական ծախս  
187.318.000 ռուբլի, իսկ արտասովոր ծախս  
3.155.000 ռուբլի:

ԲԵՐԼԻՆ, 12 յունիսի Այսօր երեկոյան այս-  
տեղ ժամանեց թագավորական ցնամբով, յու-  
նաց թագավոր և Սպարտայի զուգար, ճաշեցին  
սիլվիան երկաթուղու կայարանում և մեկ ժա-  
մից յետոյ շարունակեցին ճանապարհը դեպի  
Շտուտգարտ:

ԲԵՐԼԻՆ, 12 յունիսի Առաջադրանքի կու-  
սակցությունը յայտնում է, որ այժմ առաջ ունե-  
նալով բնակիչներին դեմ ապահովության բա-  
ցակայությունը, ինքն դադարեցնում է իր քաղա-  
քական գործունեությունը:

ՎԻԵՆԱ, 12 յունիսի Կայսրը, պատգամա-  
բույններն ընդունելով, յայտնեց, թե ինքն  
յոյս ունի խաղաղության վրա, որի պահպանու-  
թյանը Աստորիան նպաստում է, որ Աստորիան  
տեսնելով ընդհանուր դիմադրությունը՝ ինքն էլ  
զինաւորում է, որ սերբիական խնամակալու-  
թյունը բարեկամ է իր հետ և որ Բոլզարիայում  
հանգստություն է տիրում, նոյնպէս և Բոսնիա-  
յում և Հերցեգովինայում: «Fremdenblatt» ա-  
սում է, որ պատերազմի պատրաստվելը ամենա-  
լաւ միջոցն է խաղաղության համար: «Մինչև  
որ Բերլինը և Ֆրանկֆորտի խաղաղութեան  
դաշնագիրները ջերմ հակառակորդներ կան, ի-  
դէական ընդհանուր խաղաղութիւնը, ասում է  
վերոյիշեալ լրագիրը, աներևակայելի է: Մեր դե-  
վիզն է՝ դուրս լինել մեզ համար և մեր դաշնա-  
կիցները համար:

ՇՏՈՒՏԳԱՐՏ, 12 յունիսի Այսօր ժամանեց  
այստեղ թագավորական ցնամբով:

ՊԵՏԵՐՈՎԻՉ, 12 յունիսի Լուր է տարածված,  
որ այն մտադրութիւնը, որով, զէմատիքի վերա-  
նորոգութիւնները մտցնելու ժամանակ, պէտք է  
զաւաւակաւ քաղաքներում հաշտարար դատա-  
ւորների իրաւասութիւնը տրվէր դատաստանա-  
կան քննիչներին՝ չի իրագործվի: Կը մնան կա-  
ռավարութիւնից նշանակված հաշտարար դատա-  
ւորները:

ԼՈՆԴՈՆ, 13 յունիսի Արտաքին գործերի մի-  
նիստը օգնական համայնքների ժողովում յայտ-  
նեց, որ Ռուսաստանին չէ տրված բացառական  
իրաւունք երկաթուղիներ շինելու Պարսկաստա-

նում, այլ միայն խոստացված է առաջին տեղը  
տալ նրան: Երկաթուղու մի գիծ շինելու գործում,  
որի ուղղութիւնը դեռ չէ որոշված, և այն պայ-  
մանով, եթէ ընկերութիւնը մինչև հինգ տարի կը  
կազմակերպվի:

ԲԵՐԼԻՆ, 13 յունիսի Այսօր գերմանական  
թագավորական զոյգը, Սախսնիայի թագաւորի  
հետ միասին, ուղեւորվեցին Շտուտգարտ, ներկայ  
լինելու Կարլ թագաւորի 25-ամեայ յօբելանսին:

ԲԵՐԼԻՆ, 13 յունիսի Աղջակին ժողովը միա-  
ձայն ընդունեց այն առաջարկը, որով առաջարկ-  
վում է գործադրութեան մէջ մտցնել նոր տեսա-  
կի հրաշաններ, և իրագործութիւն տուեց դաշնակ-  
ցական խորհրդին՝ 16 միլիոն ֆրանկի փոխա-  
ռութիւն անելու:

ԲԵՐԼԻՆ, 13 յունիսի Այստեղ հասաւ Պար-  
սից Շահը:

ՎԻԵՆԱ, 13 յունիսի Կոմս Կառլոսի աւստ-  
րիական պատգամաւորների ժողովի բնագիտա-  
յին յանձնաժողովում մի ակնարկից ելելով այժմեան  
քաղաքական դրութեան վրա: Մինիստրն ասեց,  
որ անցեալ տարվանից իրերի դրութիւնը չէ  
փոխվել: Բայց չէ նկատվում ոչինչ այնպիսի բան,  
որը կարող լինէր սուր կերպարանք տալ պետու-  
թիւնների փոխադարձ յարաբերութիւններին: Նա  
ասեց, որ Բոսնիայի դրութիւնը վտանգի ա-  
ռիք չէ ներկայացնում, չը նայելով մինիստրա-  
կան փոփոխութեանը, որ Սերբիայի խնամակա-  
լութիւնը դրականակալ հաւատարմեցի է, որ կը  
պահպանի բարեկամական յարաբերութիւններ  
Այդ ակնարկները մէջ ոչինչ չէ յիշված Բոլզարի-  
այի մասին:

ՊԵՏԵՐՈՎԻՉ, 14 յունիսի Լսվում է որ զինու-  
թի գլխավորներին վերաբերեալ օրինադրի քն-  
նութիւնը վերջացած է և շուտով սպասւում է  
նրա հրատարակումը:

Ս. ՊԵՏԵՐՈՎԻՉԻ ԲՈՐՈՍԱ  
Յունիսի 13-ին

|                                            |       |       |
|--------------------------------------------|-------|-------|
| Ընդունի վրա 10 ֆունտ արծեւ                 | 97    | 20    |
| Բերլինի վրա 100 մարկ                       | 47    | 35    |
| Փարիզի վրա 100 ֆրանկ                       | 38    | 40    |
| Ռակի արծեւ                                 | 7     | 78    |
| Մաքսային կուպոններ                         | 155   | 25    |
| Արծաթ                                      | 1     | 12    |
| Բորսային դիվիդենդներ                       | 5 1/2 | 6 1/2 |
| Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին շրջանի           | 99    | —     |
| — 2-րդ                                     | 99    | —     |
| — 3-րդ                                     | 98    | 62    |
| — 4-րդ                                     | 98    | 62    |
| — 5-րդ                                     | 98    | 62    |
| — 6-րդ                                     | 98    | 62    |
| Նոր 4% 1-ին շրջանի                         | 83    | 50    |
| Արեւելեան 5% փոխառութ. 1-ին շրջ.           | 99    | —     |
| — 2-րդ                                     | 99    | —     |
| — 3-րդ                                     | 98    | 87    |
| Ներքին 5% առաջին փոխառութ.                 | 271   | —     |
| — երկրորդ                                  | 245   | 75    |
| 5 1/2% ընտա                                | 103   | —     |
| Ռակիայի ընտա                               | 173   | —     |
| Եթերը կոնսոլիդ. փոխառ.                     | 140   | —     |
| Նոր երկաթուղային բնուած                    | 99    | 50    |
| 5% զբաւակաւ թղթեր կալուած.                 | —     | —     |
| փոխ. կրեդ. ընկ. մետ.                       | 139   | —     |
| — թղթադ.                                   | 94    | —     |
| Գրաւ. թղ. Ալեւ. բանկի                      | 98    | 25    |
| Դիւղական բանկի                             | 102   | 62    |
| 6% զբաւ. թղ. Թիֆլիսի—27 և 43 ա.            | —     | —     |
| — Բուխարայի—18 և 43 ա.                     | —     | —     |
| Ս. Պետերբուրգի քաղաքային օբլի-<br>գացիաներ | 94    | 62    |
| Մոսկովայի քաղաք. օբլիգացիաներ              | 94    | —     |
| Սիբիրայի                                   | 95    | —     |
| Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ.             | —     | —     |
| Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը      | —     | —     |
| թող է:                                     | —     | —     |

Ժամանակաւոր խմբագիր Յ. ՏԵՐ-ՄԱՐԿԱՆՍԵԱՆՑ

Հրատարակիչ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Ն Ե Ր

ԼՈՅՍ ՏԵՍՏԻ

ԴԵՐԲԵՆՏԻ «ՇԱՀԻՐ» ԽԱՅԱՏՈՒՐԻ

ՇԱՀԻՐ ԺԱՄԱՆԱԿԻ ԵՐԳԵՐԸ

Վաճառվում է «Կենտրոնական գրաւաճառանոցում» և հրատարակչի մօտ հետևեալ  
հասցէով: Дербентъ (Дар. обл.) дѣвицѣ Маріи Макарянъ. 4—4

ԷՐԶՐՈՒՄ ՔԱՂԱՔԻ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հարկաւոր է մանկավարժական նախապատրաստութիւն ունեցող  
մի ՏԵՍՏԻՉ, երեք ՈՒՍՈՒՑԻՉ ու երկու ՈՒՍՈՒՑՈՒՆԻՉ:

Դպրոցի հոգաբարձութեան հասցէն՝ կարելի է խմանալ «Մշակի» խմբագրատանը.  
ցանկացողները պէտք է դիմեն որքան կարելի է շուտով: Հոգաբարձութիւնը ցանկալի  
է համարում, որ եթէ կարելի է վարժապետները և վարժուհիները ամուսնանան լինեն:

5—5

Յայտնվում է ի գիտութիւն թարգմանիչների, որ արդէն ռուսերէնից հայերէն է  
թարգմանված «Посредникъ»-ի հրատարակած «СОКРАТЪ» ժողովրդական զիրքը  
1—1

ՄՕՍԿՎԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂ

ամառվայ ամիսներին Թիֆլիսում գտնվելով, ցանկանում է մասնաւոր դասեր ունենալ գիմնազիա-  
կան առարկաներից: Համաձայն է թէ պատրաստել աշակերտներ և թէ գիմնազիայի աշակերտների  
հետ կրկնութիւններ անել: Հասցէն. Куки. Семеновский переулокъ, домъ Карвелова № 2

4—5

ՊՐՕՎԻԶՈՐ Ա. ՇՏԻԼԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ  
ԱՍԱՄՆԵՐԻ ՑԱՒԻ ԵՒ ՓԶԱՆԱԼՈՒ ԴԵՄ

ՊՐՕՎԵՍՈՐ ԱՍԱՄՆԱԴԵՂ ԿԱԹՈՒՆԵՐ 50 ԿՈՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՕՎԱՑԻՆԵԱՆ ԱՍԱՄՆԱՑԻՆ ԷԼԻԿՍԻՐ 80 ԿՈՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՍԱՄՆԱՑԻՆ ՓՈՇԻ 30 ԿՈՊ.

ԳԼԽԱՌՈՐ ՊԱՀԵՍ:

ԹԻՖԼԻՍԻՄ՝ Կոլկասեան դեղա-  
վաճառատան, և պ. պ. Շահ-  
պարոնեանցի, Մակիէրի, Սէնչի-  
կովսկու և Արմուրովի դեղա-  
տներում: ԲԱՂՈՒԻ մէջ, Բէկէրի մօտ, ԳՈՒԹԱՑԻՍՈՒՄ՝ Կօփօշկի մօտ, ՍՍԱԿՐՍՊՈԼԻՍՄ,  
Բրօսնոցկու մօտ և ԵԿԱՆԵՐԻՆՕԳՐԱՐԻՍՄ:  
19—52 (Հ.)

ԱԼԲԵՐՏԻ ՄԱԳԱՋԻՆՈՒՄ

(Ժողովարանին կից)

Ստացված են մեծ քանակութեամբ ֆՈՒԲՍԵՐ ԽԱՂՈՂԻ ԱՅԳԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ, վերջին  
կատարելագործված սխառութեան չափմամբ, պոլիթերիզատորով և առանց զրան: Գները  
շատ չափաւոր են, և մատչելի ամենքի համար:

6—8

ՆՈՐ ԳԻՐԻ:

ԲԱՐԵՊԱՇՏ ՄԱՐԴԻԿ,

Առաջ չափահասների համար.

ԴԵՐԲԻ ԲԱՐԻՈՒԴԱՐԱՆՆԻ:

Վաճառվում է կենտրոնական գրաւաճառանոցում:

ԳԻՆԵ Ե 60 ԿՈՊ.

4—5

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՐԱՐԵԱՆԻ

(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամէն օր

ԱՌԱՌՕՏՆԵՐԸ

ՐՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երկխոյց և կանանց ց.  
ԿԻՆԻՐԻՆԿԻ ԽՍԱՀԱԿԱՆՆԵՑ—11 1/2—12 ժ. կանանց և երկխոյց ց.  
ԲԵՆԿԵՎՍԿԻ—11—12 ժ. ականցի, կոկորդի, քիթի ց. և սիֆիլիսի (վիրաբուժ. և ատամնաբուժ.)  
ԱՐՏԵՄԻԵՎ—12—1 ժ. երեքշաբթի, ուրբաթ և կիրակի, կանանց ց.  
ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—12—1 ժ. ներքին և երկխոյց ց. բացի կիրակի:

ԵՐԵՎԱՆԵՐԸ

ԴՈՒՐՈՄՍԿԻ—5 1/2—7 ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի.  
ՓՈՒԼԻՆԵԱՆ—5 1/2—6 1/2 ժ. ներքին, երկխոյց և ջգային ց. (էլեկտրոտերապիա):  
ԲԵՆԿԵՎՍԿԻ—7—8 ժամ.  
Հիւանդանոցներն են մասնաւոր և ընդհանուր: Երկուսն էլ և Արտադեան  
վճար—50 կ.: Համալսարանի (կոնսիլիումի) համար փոխադարձ համաձայնութեամբ:  
Հիւանդանոցի փոխ-վերատեսուչ ՐՈՒԴԿՈՎՍԿԻ

Abonnement-Einfadung au  
die meist verbreitete deutsche Wochenschrift:

Das Echo

(Stimmen aus allen Parteien.)

Wochenschrift für Politik, Literatur, Kunst und Wissenschaft.

Das Echo bringt allwöchentlich in unterhaltender Form Berichte über alle politischen, wirt-  
schaftlichen, wissenschaftlichen und gesellschaftlichen Vorgänge, welche sich in D. und Aus-  
lande abspielen.

Das Echo ist kein Parteiblatt, sondern es läßt die interessantesten Stimmen aller Parteien  
zu Worte kommen.

Das Echo widmet außerdem dem Leben der hohen Kreise eingehende Aufmerksamkeit.  
Das Echo bringt in jeder Nummer ein bis zwei abgeschlossene Novellen, Erzählungen u.  
f. w. aus der Feder bewährter, zeitgenössischer Schriftsteller.

Das Echo bringt informierende Notizen, Kritiken und Leseproben aus den bedeutendsten  
Erscheinungen des internationalen Büchermarktes.

Das Echo betrachtet es insbesondere als seine Aufgabe, dem Leben und Treiben der  
Deutschen im Auslande die liebevollste Aufmerksamkeit zuzuwenden.

Das Echo will somit unsern Landsleuten im Auslande ein „Vote aus der Heimat“ sein,  
deshalb ist auch sein Abonnementpreis ein sehr niedriger. Es versendet die Expedition in Berlin  
S. W. das Echo nach allen zum Weltpostverein gehörigen Ländern für 4 Mark 50 Pf. vierteljähr-  
lich und für 17 Mark ganzjährig, nach den Ländern und Gebieten außerhalb des Weltpostvereins  
für 23 Mark ganzjährig.—Zahlungen geschehen am raschesten und sichersten durch Postanweisung  
oder durch Anweisung auf deutsche Banken.—Ebenso liefert jede deutsche Buchhandlung und Zei-  
tungsagentur im Auslande das Echo zu den landesüblichen Preisen. Probenummern sind durch  
die letzteren zu beziehen oder auch direkt von

J. H. Schorer,  
Verlag des Echo, Berlin S. W.